

Ամեն ոք իր վերքը կուրծքին կը բանայ.
 Պարմանիներ ցոյց կու տան
 Թեւերն իրենց կոտրած՝ շղղթայ կոտրելէն.
 Մայրերն ահա վեր կ'առնեն սեւ-սեւ քօղեր
 Անոնց ծալքին մէջ բանալով գանկիկներ
 Մանուկներու՝ այրուծիին տակ ճըզմուած,
 Եւ պառաւներն անոր առջեւ կը փըռնեն
 Քըղամիդները կարմիր
 Դըրժուած մորթուած դիւցազնական թռռներու:
 Եւ կը բերեն ամենն ալ
 Իրենց վերջին հարըստութիւնը՝ նըւեր,
 Եւ ծընրադիր՝ անիծախառն աղերսով
 Արտասուագին միահամուռ կը գոչեն.
 -"Ո՛վ Նեմեսիս, Անվրիպելի՛դ, Վրիժուհի՛դ,
 Մեր տառապանքն, անկումը մեր կը տեսնե՛ս.
 Մեր արցունքի մէկ շիթին
 Ովկիանական անհունութիւնը արդեօք
 Քու ափիդ մէջ կըջռեցի՞ր:
 Բա՛ւ է փառքերն ու հաճոյքներն արբեցնենք
 Մեր արիւնին արիւններովն ու մինչեւ
 Ոսկորներուս քըրտինքով.
 Բա՛ւ է սուիները պատռեն
 Մեր արգանդին մէջ յաւետ
 Լուսաթաղանթն արշալոյսի սաղմերուն.
 -Բա՛ւ է անիւը գործատան փերթ առ փերթ
 Խըլէ մեր միսն եւ իւղոտէ ճըղուղն իր.
 Բա՛ւ է, բա՛ւ է մեր բովանդակ կեանքին մէջ
 Խարագանուած թիկունքներնուս վրայ կըրենք
 Մեր շիրմաքարն ու երթանք ա՛յսպէս շիրիմ:
 Վըրեժի ժամն ա՛լ հասաւ.
 Նըշկահումի ամպրոպահունչ ժամն հասաւ: